

բուժեանց միջեւ, որուն մէկ երկու յօդուածները շատ աննպաստ տրամադրութիւններ կը պարունակեն Հայաստանի համար:

Ես յանկարծակիի եկայ եւ չէի կրնար հաւատալ նման բանի մը կարելիութեան: Յեղափոխական համայնավարներու եւ ջարդարար փաշաներու միջեւ ունէ գինակցութիւն անհրեշարին բան մը կը համարէի, եւ հազարապետ Ի...-ի յայտնութիւնը ինծի առասպել կը թուէր:

Յայտնեցի իմ տարակուսանքս եւ խնդրեցի իր յայտնութիւնը ապացուցանող փաստեր: Խօսակիցս դարակը քաշեց եւ՝ դուրս հանելով գինակցութեան պայմանագրութեան մէկ լուսանկարը՝ երկարեց ինծի:

Կարգացի ամբողջութեամբ եւ աչքերս սեւեռեցան այն անիծեալ հատուածին վրայ, որ կը շօշափէր Հայաստանի կենսական շահերը:

Պորճրդային կառավարութիւնը յանձն կ'անէր 1) վերահաստատել 1878-ի ռուս-թրքական սահմանները եւ 2) իր ձեռքը առնել Անդրկովկասի երկաթուղիներն ու խճուղիները, Պորճրդային եւ Միլլի բանակները յարաբերութեան մէջ դնելու համար:

Շատ պարզ էր, թէ այդպիսի առաջադրութիւն մը կրնար իրողործուիլ այն պարագային միայն, երբ Հայաստանի անկախութիւնը գոյութենէ կը դադարէր, կամ Ռուսաստանի Պորճրդային իշխանութիւնը տէր կը դառնար Անդրկովկասի: Ուրեմն դաւը ուղղակի կամ անուղղակի ուղղուած էր Հայաստանի պետական գոյութեան դէմ:

Մինչ ես խորասուզուած էի այս մտածումներուն մէջ, խօսակիցս ըսաւ, թէ պէտք չէար այնքան յուզուելու, քանի որ Թուրքիոյ, Հայաստանի եւ Պորճրդային բանակներու միջեւ գոյութիւն ունէր ռուսական կամաւորական բանակը, որը արհամարհելի ուժ մը չէր եւ ի վիճակի էր անուղղակի այս բոյր դաւերը ի դերսէ հանել իր դիմացկունութեամբը:

Ի հարկէ, որոշ ճշմարտութիւն կար այս մտածողութեան մէջ այն օրերուն, երբ կամաւորական բանակը ամբողջ հարսուային Ռուսաստանի տէրն էր եւ յաջող կերպով կը դիմադրէր բոլշեւիկեան կարմիր բանակներուն:

Այնուհետեւ չեմ դիտեր, թէ ինչո՞ւ, ես մեծ սարսափ մը ունեցայ այս դաւին տեղեկանալու օրէն սկսեալ:

Ես խնդրեցի խօսակիցէս, որ այդ լուսանկարի մէկ օրինակը ինծի տայ Հայաստանի կառավարութեան ղրկելու համար: Քիչ մը մտածելէ յետոյ՝ համաձայնեցաւ, բայց պայմանով, որ կառավարութենէն բացի, ուրիշ ոչ մէկը պիտի իմանայ այս եղբուքիւնը:

Գաղտնի պահելու պատճառները հետեւեալներն էին.—

Գրաւման բանակը չէր ուզեր, որ գիտցուի, թէ իրենց մօտ կը դառնուի այս գաղտնի գինակցութեան պայմանագրութեան պատճէնը: Անդրիական իշխանութեան գրաւման բանակին համար նախընտրելի էր, որ ստորագրող կողմերը չգիտնային, թէ այդ համաձայնագրի պատճէնը անգլիացիներուն քով կը գտնուի. դանտնք այս տեսակէտէն անդխտութեան մէջ պահելը քաղաքական ռազմական տեսակէտներէ կարեւոր էր: Ասկէ զտա, եթէ այդ բանին տեղեկ ըլլային գաղտնի դաշինքը ստորագրող կողմերը, հաւանաբար պիտի վտանգուէր նաեւ իրենց լրատուն կամ այլ խօսքով՝ լրտեսը*), որ Միլլի շարժման գործօն մասնակցութիւն ունէր:

Ես երգամբ խոստացայ լուսանկարը զըրկել միայն Հայաստանի կառավարութեան, եւ այդ մասին սեւէ բան չըսել ոչ ծանօթներու, բարեկամներու եւ ոչ ալ մամուլի նիւթ դարձնել զայն:

Տուաւ ինծի մէկ օրինակը, եւ մենք ապահով ձեռով մը ղրկեցինք Հայաստանի կառավարութեան:

Ես կատարելապէս համոզուած էի անոր իրականութեան: Բայց կարծեմ Հայաստանի կառավարութեան անդամներէն իմանք չէին հաւատացած անոր իրականութեան եւ նկատած էին անդրիական հնարք մը:

* * *

Գծախտարար, ռուսական կամաւորական բանակին վիճակուած չէր երկար դիմանալու

*) Ժամանակներ յետոյ միայն ես հասկըցայ թէ ո՞վ էր լրատուն եւ ինչ վստահութիւն կը վայելէր Միլլի ղեկավարներու մօտ: